# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 20

12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու հերթական նիստին ներկա էին 8 ավագանու անդամներ ՝ Խաչիկ Վարդանյանը, Ռուսլան Օհանյանը, Աիդա Սարգսյանը, Նարեկ Նալբանդյանը, Դավիթ Մուրադյանը, Գոհար Պառավյանը, Սերյոժա Այվազյանը,Արսեն Գրիգորյանը:

Բացակա էին Վրույր Այվազյանը, Վարսենիկ Քալաշյանը, Հրայր Թորոսյանը, Արտյոմ Տոնոյանը, Թամարա Գրիգորյանը, Համլետ Գևորգյանը,Ալիկ Սարգսյանը:

Նիստին մասնակցում էին վարչական ղեկավարներ՝ Ա.Մագթաղյանը, Հ. Վարդանյանը Կ. Լալազարյանը, Մ.Ալավերդյանը, Գոռ Աղաջանյանը ,համայնքապետարանի աշխատակիցներ ՝ Մ. Մեսրոպյանը,, Ս.Ղուկասյանը, Ս.Սուքիասյանը, Լ.Թորոսյանը

***Նիստը վարում էր համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ռուսլան Օհանյանը:***

***Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Սերինե Նալբանդյանը***:

Համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ռուսլան Օհանյանը ներկայացրեց օրակարգը, ավագանին քննարկեց և 8-դեմ, 0-կողմ ձայներով դեմ քվեարկեց օրակարգին՝ առաջարկելով օրակարգ ընդգրկել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին,Գյուլագարակ համայնքի Գարգառ Գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին,ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի առաջին դասարան հաճախող երեխաների ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին հարցերը: Քննարկումից հետո հարցերն ընդգրկվեցին օրակարգ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1.Գյուլագարակ համայնքի ավագանու երրորդ նստաշրջանի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին :

/զեկ. Ռ.Օհանյան/

2. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

3.Արտաբյուջետային հաշիվ բացելու վերաբերյալ

/Զեկ. Մ.Մեսրոպյան/

4.Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեից դրամական մրցանակ տրամադրելու մասին

/Զեկ. Ռ.Օհանյան/

5. 2023թ.« Բերքի տոն» համայնքային միջոցառման իրականացման համար համայնքի բյուջեից գումար տրամադրելու մասին

/Զեկ. Մ.Մեսրոպյան/

6.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թվականի 17.08.2023 թվականի թիվ 80-Ն որոշումը

/Զեկ.Մ.Մեսրոպյան/

7.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության տալու մասին

/Զեկ.Ս. Ղուկասյան/

8.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 15.02.2023 թվականի թիվ 21-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

/Զեկ. Ռ.Օհանյան/

9.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի նորածիններ ունեցող և հարազատին կորցրած ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

/Զեկ. Ռ.Օհանյան/

10.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

/Զեկ. Ռ.Օհանյան/

11. ՀՀ Լոռու մարզի Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց Թեմին գումար փոխանցելու մասին

/Զեկ. Ռ.Օհանյան/

12.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

/Զեկ. Ս.Ղուկասյան/

13.Գյուլագարակ համայնքի Գարգառ Գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին

/Զեկ. Ս.Ղուկասյան/

14.ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի

15.Գյուլագարակ համայնքի ավագանու հաջորդ նիստի օր նշանակելու մասին
/ Զեկ.Ռ.Օհանյան

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թ. սեպտեմբերի 12-ի հերթական նիստիօրակարգը՝համաձայն հավելվածի:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 84-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.Մ.Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, ՀՀ «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել Գյուլագարակ համայնքի 2023թվականի տարեկան բյուջեում կատարված փոփոխությունները համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 85-Ն/

Լսեցին՝

ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
/Զեկ.Մ.Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,92-րդ հոդվածի 4-րդ մասով ,«Բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով և ՀՀ Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամի շրջանակում Գյուլագարակի համայնքապետարանի կողմից ներկայացված ծրագրով դրամաշնորհի ստացման հայտը,ինչպես նաև հաշվի առնելով Գյուլագարակի համայնքի ղեկավարի առաջարկությունը. համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ հավանություն

ՀՀ Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամի շրջանակում Գյուլագարակի համայնքապետարանի արևային կայանների ձեռքբերման ծրագրի իրականացման նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու առաջարկությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Լսեցին՝

ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023թ. ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թ. փետրվարի 15-ի կամավոր խնդիրները ,դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին թիվ 14-Ա որոշումը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.2023թվականի 8-րդ Համահայկական խաղերում 4X400 մետր փոխանցումավազքում արծաթե մեդալի արժանացած Գյուլագարակի համայնքապետարանը ներկայացնող « Վանաձորի ատլետիկայի մարզադպրոցի» մարզիկներին՝ Ջեմմա Գրիգորյանին, Մերի Մկրտչյանին , Դիանա Սեյրանյանին , Նաիրա Բաղդասարյանին և մարզիչ Մարինե Հալաջյանին Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեի « Այլ մշակութային կազմակերպություններ» 4819 հոդվածից յուրաքանչյուր մարզիկին և մարզչին տրամադրել 20000 ՀՀ դրամ /ընդհանուր հարյուր հազար ՀՀ դրամ / դրամական մրցանակ:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 87-Ա/

Լսեցին՝

2023ԹՎԱԿԱՆԻ «ԲԵՐՔԻ ՏՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.2023թվականի «Բերքի տոն» համայնքային միջոցառման իրականացման կապակցությամբ, Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեի «Այլ մշակույթային կազմակերպություններ» 4819 հոդվածից տրամադրել 200.000(հարյուր հազար) ՀՀ դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 88-Ա/

Լսեցին՝

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 17.08.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 80-Ն ՈՐՈՇՈՒՄԸ

/Զեկ. Մ.Մեսրոպյան/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով ՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Գյուլագարակ համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին » թիվ 80-Ն որոշումը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Լսեցին՝

# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս.Ղուկասյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,«Հողային օրենսգրքի» 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ և 68-րդ հոդվածներով,«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքով,հաշվի առնելով համայնքի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը,Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է՝
1.Տալ հավանություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերը վարձակալության տալուն

1) 0.29422 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 1 /մեկ/ լոտով ծածկագիր 06-029-0080-0003 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 10000/ տաս հազար / ՀՀ դրամ:

2) 1.67831 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 2 /երկու/ լոտով ծածկագիր 06-029-0133-0010 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/ տասնըհինգ հազար / ՀՀ դրամ:

3) 1.08655 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 3 /երեք/ լոտով ծածկագիր 06-029-0139-0025 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/տասնըհինգ հազար / ՀՀ դրամ:

4) 0.27442 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 4 /չորս/ լոտով ծածկագիր 06-029-0138-0036 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 7000/յոթ հազար / ՀՀ դրամ:

5) 1.00568 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 5 /հինգ/ լոտով ծածկագիր 06-029-0140-0013 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/տասնըհինգ հազար / ՀՀ դրամ:

6) 0.41978 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 6 /յոթ/ լոտով ծածկագիր 06-013-0118-0028 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 10000/տաս հազար / ՀՀ դրամ:

7) 0.50143 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 7 /ութ/ լոտով ծածկագիր 06-013-0118-0029 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 15000/տասնհինգ հազար / ՀՀ դրամ:

8) 0.88159 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 8 /ինը/ լոտով ծածկագիր 06-013-0107-0003 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 18000/տասնութ հազար / ՀՀ դրամ:

9) 0.30563 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 9/տաս/ լոտով ծածկագիր 06-057-0113-0021 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 7000/յոթ հազար / ՀՀ դրամ:

10) 0.6528 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, 10 /տասնմեկ/ լոտով ծածկագիր 06-057-0113-0022 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 12000/տասներկու հազար / ՀՀ դրամ:

11) 0.24614 հա հողամասը՝ նպատակային նշանակությունը գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ արոտավայր, 11 /տասներկու/ լոտով ծածկագիր 06-057-0146-0022 25 տարի ժամկետով, մեկնարկային գինը 5000/հինգ հազար / ՀՀ դրամ:

2.Աճուրդ վաճառքով օտարելուն:

1) 1/մեկ/ լոտով 0,22765 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-029-0071-0001, մեկնարկային գինը 815000 / ութ հարյուր տասնըհինգ հազար/ ՀՀ դրամ:

2) 2/երկու/ լոտով 0,3129 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-029-0071-0003, մեկնարկային գինը 3120000 / երեք միլիոն մեկ հարյուր քսան հազար / ՀՀ դրամ:

3) 3/երեք/ լոտով 0,21803 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-029-0071-0004, մեկնարկային գինը 783900 / յոթ հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ:

4) 4/չորս/ լոտով 0,23822 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-029-0071-0009, մեկնարկային գինը 852000 / ութ հարյուր հիսուներկու հազար / ՀՀ դրամ:

5) 5/հինգ/ լոտով 0,10524 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-029-0001-0020, մեկնարկային գինը 425000 / չորս հարյուր քսանհինգ հազար / ՀՀ դրամ:

6) 6/վեց/ լոտով 0,10766 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝բնակելի կառուցապատման, ծածկագիր 06-029-0010-0004, մեկնարկային գինը 400000 / չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

7) 7/յոթ/ լոտով 0,25488 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ խոտհարք, ծածկագիր 06-029-0144-0028, մեկնարկային գինը 250000 / երկու հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ:

8) 8/ութ/ լոտով 0,04894 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-104-0029-0032, մեկնարկային գինը 137000 / մեկ հարյուր երեսունյոթ հազար/ ՀՀ դրամ:

9) 9/տաս/ լոտով 0,09629 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, ծածկագիր 06-057-00730032, մեկնարկային գինը 300000 / երեք հարյուր հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 90-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15.02.2023 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 21-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.Օհանյան/

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերին մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը ,որոշում եմ.

1. Գյուլագարակ համայնքի ավագանու 15.02.2023թ. ՀՀ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների 2023

հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 91-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՀԱՐԱԶԱՏԻՆ ԿՈՐՑՐԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ.Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձնաժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից

ա/ նորածիններ ունեցող ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն/ համաձայն թիվ 01 հավելվածի

բ/ հարազատին կորցրած ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն համաձայն թիվ 02 հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 92-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/Զեկ. Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք

խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձնաժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 93-Ա/

Լսեցին՝

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻՆ ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռու մարզի Գարգառ գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցու տանիքի վերանորոգման համար Գյուլագարակ համայնքի բյուջեի 4819 հոդվածից Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց Թեմին հ/հ 247170004938 «Արդշինբանկ» ԲԲԸ-ին փոխանցել 300 000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 94-Ա/

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս.Ղուկասյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» ՀայաստանիՀանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի

23-ի թիվ 656 որոշման 9-րդ կետի պահանջները՝ համայնքի ավագանին որոշում է.
**1.** Հաստատել Գյուլագարակ համայնքի հողային հաշվեկշիռը 01.07.2023թ. դրությամբ՝ համաձայն ձև 22-ի :
**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 95-Ա/

Լսեցին՝

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՐԳԱՌ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ս.Ղուկասյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշմամբ սահմանված կարգով, հիմք ընդունելով Հրայր Հակոբյանի դիմումը Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Գյուլագարակ համայնքի Գարգառ գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող 06-027-0188-0048,06-027-0188-0049, 06-027-0188-0046, 06-027-0188-0045, 06-027-0188-0044 կադաստրային ծածկագրերի 3.167756 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 96-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունների իրականացման նպատակով դիմումների քննարկման հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 14-Ա որոշմանը համապատասխան,հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները, ինչպես նաև համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննող հանձանժողովի եզրակացությունը՝ Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Գյուլագարակ համայնքի բյուջեից համայնքի առաջին դասարան հաճախող երեխաների դասղեկներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 97-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ռ.Օհանյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և նույն օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով Գյուլագարակ համայնքի ավագանին որոշում է.

1.Գյուլագարակ համայնքի ավագանու հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի հոկտեմբերի 13 - ը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԿՈՂՄ-8, ԴԵՄ-0, ՁԵՌՆՊԱՀ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում թիվ 98-Ա/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՌՈՒՍԼԱՆ ՕՀԱՆՅԱՆ

**ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՐԻՆԵ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԸ**

---